

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Ք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական ագրարային համալսարանում ուսանողների և աշխատակիցների սննդի կազմակերպումը կատարվում է ՀՀ կառավարության 2005թ. սեպտեմբերի 15-ի «Հայաստանի պետական ագրարային համալսարանը վերակազմակերպելու մասին» թիվ 1567 որոշման 7-րդ կետի «Ժ» ենթակետով Համալսարանին վերապահված՝ սովորողների սննդի կազմակերպման լիազորությունների սահմաններում և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին 2001թ. սեպտեմբերի 10-ի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պայմաններով»:
2. Համալսարանում սովորողների և աշխատողների սննդի կազմակերպումը իրականացնում են սննդի կազմակերպման սեկտորը, որի կանոնակարգը հաստատվում է Համալսարանի խորհրդի կողմից և գործողության մեջ է դրվում ՀՊԱՀ ռեկտորի հրամանով:
3. Սննդի կազմակերպման սեկտորը ներառված է Համալսարանի տնտեսական վարչության կազմում որպես ենթակառույցներ:
4. Սեկտորի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատվում է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների համար սահմանված կարգով:

ՍԵԿՏՈՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Սեկտորը կազմակերպում և իրականացնում է սննդամթերքի հայթայթումը, սննդի պատրաստումը և մատուցումը:
6. Ապահովում է մատուցվող սննդի տեսականին, որակը և սահմանված սանիտարահիգիենիկ անվտանգությունը:
7. Կազմում է հաշվետվություններ և հաշվապահական հաշվառման օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր և ապահովում դրանց ճիշտ վարումն ու պահպանությունը:

8. ՀՊԱՀ ռեկտորի հետ համաձայնելով սահմանում է մատուցվող սննդատեսակների գները, ելնելով ձևավորված շուկայական գների մակարդակից:
9. Սեկտորի գույքը և ֆինանսական միջոցները պատկանում են Համալսարանին:
10. Սեկտորի գործունեությունը ղեկավարում է վարիչը, որին սահմանված կարգով աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում ՀՊԱՀ ռեկտորը ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորի ներկայացմամբ:
11. Սննդի սեկտորի վարիչը.
 - ա) ապահովում է սեկտորի աշխատանքային նորմալ գործունեությունը և կարգապահությունը, հատուկ ուշադրություն դարձնելով օբյեկտների սանիտարա-համաճարակային և հիգիենիկ անվտանգության ապահովմանը, որի համար կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն,
 - բ) ապահովում է սեկտորին հատկացված գույքի պահպանումը և արդյունավետ օգտագործումը և օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում այդ գույքին պատճառված վնասի համար,
 - գ) օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաշվետվություն է ներկայացնում ՀՊԱՀ հաշվապահություն՝ սեկտորի ֆինանսատնտեսական գործունեության մասին, կցելով հայթայթված սննդամթերքի արժեքն ու քանակը հիմանվորող համապատասխան փաստաթղթեր,
 - դ) սննդի վաճառքից գոյացած գումարը սահմանված կարգով մուտք է անում ՀՊԱՀ հաշվապահության դրամարկղ:
12. Սեկտորի աշխատակիցների աշխատանքի վարձատրությունը կատարվում է Համալսարանի կողմից սահմանված հաստիքացուցակի, դրույքների սահմաններում:
13. Սեկտորի վերակազմակերպումը կամ լուծարումը կատարվում է ՀՊԱՀ կանոնադրությամբ սահմանված կարգով: